ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՀՀԿԳՄՆՄԱԾՁԲ-24/87-Հ1

04.09.2024թ. ԿՆՔՎԱԾ ԹԻՎ ՀՀԿԳՄՆՄԱԾՁԲ-24/87 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «23» «12» 2024թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հասմիկ Հակոբյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ն՝ ի դեմս տնօրեն Արմեն Հովհաննիսյանի, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 04.09.2024թ. կնքված N ՀՀԿԳՄՆՄԱԾՁԲ-24/87 գնման պայմանագրի 7.5 կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12.12.2024թ թիվ 1973-Ն որոշումը, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին գլխավոր Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1 Պայմանագրի 4.1 կետով նախատեսված ծառայությունների ընդհանուր գինը նվազեցնել 116100 (մեկ հարյուր տասնվեց հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով, որից հետո Պայմանագրի ընդհանուր գինը կկազմի 33900 (երեսուներեք հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:

1.1.2 Հաստատել նոր փոփոխված վճարման ժամանակացույցը համաձայն սույն համաձայնագրի Հավելված 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայությունների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԿԳՄՍՆ Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2, ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ՝ 900011041192 ՀՎՀՀ՝ 02698732	«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ Հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Թաիրովի 15 ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն Հ/Հ՝ 900018001843 ՀՎՀՀ՝ 02511401
Գլխավոր քարտուղար՝	**Տնօրեն՝**
----------**Հ. Հակոբյան**	----------**Ա.Հովհաննիսյան**
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված թիվ 1

«23» «12» 2024թ. կնքված

ՀՀԿԳՄՆՄԱԾՁԲ-24/87–21 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

(փոփոխված)

ՀՀ դրամ

Հրա-վերով նախա-տեսված չափա-բաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ ՀՀ պետական բյուջեից՝ ըստ ամիսների, այդ թվում.												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	98111140/4	**Հեղինակային հսկողության ծառայություն**	-	-	-	-	-	-	-	-	33900	33900	33900	33900	**33900**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- **Հ. Հակոբյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

---------- **Ա.Հովհաննիսյան**

(ստորագրություն)

Կ.Տ.